ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «01» մարտի 2024թ.
ժամը 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,
Բացող անդամներ՝ Ա. Կատվալյան, Գ.Աղլամազյան,
Քարտուղար՝ Ս.Մելքոնյան

<u>«ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի</u>
Մ.Մովսիսյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սյուզաննա Մելքոնյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ են ներկայացրել 3 /երեք/ մասնակիցներ՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Քյավառ Սերվիս» ՍՊԸ	1201, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 41/5 qyavar.servis@mail.ru
2	«Ա.Ա.Մ. 33» ՍՊԸ	ք.Արարատ, Պ.Սևակի փ. 10 հասցե a.a.m.33@mail.ru
3	«ԳԱՌԱՆՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	ք.Երևան, Աջափնյակ Սիլիկյան թ/մ 7փ, Ռումինական տնակ garanq.construction@bk.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

2.1) «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացված հայտի հավելված 1-ում /գնանշման հարցմանն մասնակցելու դիմում հայտարարություն/ սխալ է նշված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

2.2) «Ա.Ա.Մ. 33» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- հրավերում առկա փաստաթղթերը ստորագրվել են մի անձի կողմից, որը չունի նման լիազորություն՝ չի պահպանվել հրավերի փաթեթի II մասի 2.7 կետի պահանջները, այն է՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը: Եթե հայտը ներկայացնում է լիազորված անձը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:
- Հայտով ներկայացված է այլ կազմակերպության լիցենզիա, բացակայում է հրավերի I մասի 1.1 կետով պահանջվող լիցենզիան և տրանսպորտային ներդիրը:

2.3) «ԳԱՌԱՆՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-N որոշման 41-րդ կետը և 2024 թվականի փետրվարի 20-ին ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/1 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին և «Ա.Ա.Մ. 33» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 05/03/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվեն՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Գնահատող **հ**անձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մարտի 6-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԿԱՏՎԱԼՅԱՆ
		Գ.ԱՂԼԱՄԱՋՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ